ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՀ-ՄԱԱՊՁԲ-22/23-Պ

ք. Երևան «17»-ը նոյեմբերի 2022թ.

Անհատ ձեռնարկատեր Արտակ Հարությունյան Շահնազարին, այսուհետ՝ «Վաճառող», մի կողմից, և

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով Գնորդին մատակարարել սույն Պայմանագրի Հավելված 1-ում նշված ապրանքները (այսուհետ նաև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրանց դիմաց սույն Պայմանագրով նախատեսված կարգով, չափով և ժամկետում:

1.2 Սույն Պայմանագրով նախատեսված Ապրանքի տեսքը, գույները պետք է նախապես համաձայնեցվեն Գնորդի հետ և համապատասխանեն կողմերի միջև համաձայնեցված տվյալներին: Պայմանագրի կատարման ընթացքում, Գնորդի պահանջով կամ համաձայնությամբ էսքիզային չափսերը կարող են փոփոխվել մինչև 10 տոկոսի սահմաններում:

1.3 Սույն Պայմանագրով սահմանված Ապրանքը մատակարարվելու է Գնորդին սույն Պայմանագիրը կնքելուց հետո մինչև 2022թ.-ի դեկտեմբերի 01-ը ներառյալ, ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 հասցեով:

1.4 Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը Կողմերի միջև համաձայնեցված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարվելու դեպքում իր հայեցողությամբ հրաժարվել դրանից և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրով նախատեսված և Կողմերի միջև համաձայնեցված բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

i. պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

ii. չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինելու ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարել Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 6.2 կետով նախատեսված տույժը.

iii. հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնել Ապրանքի համար վճարված գումարը, եթե Ապրանքի համար արդեն իսկ վճարվել է:

2.1.3 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

i. հրաժարվել Ապրանքից.

ii. պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան և պահանջել Վաճառողից վճարել Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև՝ 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Ընդ որում, Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

i. մատակարարվել է անպատշաճ որակի և/կամ տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

ii. Ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է:

2.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել դրա պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում, Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի որակի, տեսականու մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո ողջամիտ ժամկետում:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով մատակարարված Ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Գնորդի համաձայնությամբ Ապրանքը մատակարարել վաղաժամկետ:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել Պայմանագրով նախատեսված որակի և տեսակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված ժամկետում և հասցեով:

2.4.2 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

2.4.4 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում այլ կերպ տնօրինել դրանք և հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, դրանք իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված՝ Գնորդի կատարած անհրաժեշտ ծախսերը:

2.4.5 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.6 Պայմանագրի 2.1.6 կետով նախատեսված իրավիճակներում Պայմանագրի լուծման դեպքում, Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.7 Պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում, դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրով մատակարարման ենթակա Ապրանքի ընդհանուր արժեքը կազմում է 1 530 000 (մեկ միլիոն հինգ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ: Սույն Պայմանագրի ընդհանուր արժեքը ներառում է Պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից իրականացվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման ծախսերը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Մատակարարված Ապրանքի դիմաց վճարումն իրականացվում է հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3 Վճարման ամսաթիվ է համարվում Գնորդի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը:

3.4 Բանկային ծախսերը Գնորդի բանկում կատարում է Գնորդը, իսկ Վաճառողի բանկում՝ Վաճառողը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

4.1 Ապրանքն ընդունվում է Վաճառողի և Գնորդի միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ: Ապրանքների մատակարարման պահին Վաճառողը Գնորդին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:

4.2 Գնորդը հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը ստանալու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի մեկական օրինակները կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը: Ընդ որում, սույն Պայմանագրի շրջանակներում հաշիվ-վավերագրի հաստատման օր է համարվում դրա վրա Կողմերից վերջինի ստորագրության (կնիքի առկայության դեպքում նաև կնքման) օրը:

4.3 Եթե Պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի հաստատում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրանց ընդունումը, ապա Ապրանքը համարվում է ընդունված և Պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում Ապրանքի որակի, մատակարարման ժամկետի, բնութագրի պայմանի պահպանման համար:

5.2 Ապրանքի մատակարարման համար Կողմերի միջև համաձայնեցված ժամկետի խախտման դեպքում, Վաճառողից կետանցի յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ չմատակարարված Ապրանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժը հաշվարկվում է Կողմերի միջև համաձայնեցված մատակարարման ժամկետից մինչև Կողմերի կողմից սույն Պայմանագրով համաձայնեցված ծավալներով պատշաճ որակի և տեսակի պայմանի պահպանմամբ Ապրանքը Գնորդին փաստացի հանձնելու օրն ընկած ժամանակահատվածի համար:

5.3 Պայմանագրի Հավելված 1-ում նշված բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու դեպքում, Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 10 (տասը) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Մատակարարված Ապրանքի դիմաց վճարելու սույն Պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում, Գնորդի նկատմամբ կետանցի յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.7 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը ստորագրելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրվելու պահից և գործում է մինչև Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Կողմերից որևէ մեկն իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցելու երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

7.3 Սույն Պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց Կողմերի գրավոր համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի՝ առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.4 Սույն Պայմանագրի Հավելված 1-ը հանդիսանում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

7.5 Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.6 Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

7.7 Սույն Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ սույն Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

7.8 Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, համապատասխան Կողմը պարտավոր է այդ մասին պատշաճ կերպով գրավոր ծանուցել մյուս Կողմին՝ այդպիսի փոփոխությունից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ նախկինում տրամադրված վավերապայմաններով արված վճարումները, ուղարկված ծանուցումները համապատասխանաբար կհամարվեն ժամանակին կատարված կամ պատշաճ հասցեով ուղարկված:

7.9 Սույն Պայմանագրի առարկային վերաբերող և սույն Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

7.12 Սույն Պայմանագիրը ստորագրող Կողմերի ներկայացուցիչները սույնով հաստատում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու սույն Պայմանագիրը և ներկայացնելու Կողմերին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Վաճառող	Գնորդ
Ա/Ձ Արտակ Հարությունյան Շահնազարի	**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ**
Փաստացի գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 4, 74,75 տարածք	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 20160365	ՀՎՀՀ՝ 01540062
«Ինեկոբանկ» ՓԲԸ	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2052032276781001	Հ/Հ՝ 2050022082671001
Արտակ Հարությունյան	**Հովհաննես Մովսիսյան**
	Գործադիր տնօրեն

Հավելված N 1
2022թ.-ի նոյեմբերի 17-ին կնքված
N ՀՀՀ-ՄԱԱՊՁԲ-22/23-Պ պայմանագրի

ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ՔԱՆԱԿԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԱՐԺԵՔԸ

Հ/Հ	Անվանումը	Քանակ	Տեխնիկական բնութագիր	Արժեքը/ ՀՀ դրամ
1.	Դրոշներ՝ նախատեսված ՄՀՀ գլխավոր ֆասադի առջևի հատվածի համար	24 հատ	ֆլաժնի տրիկոտաժ, 100% երկկողմանի թափանցիկությամբ, 2x4 չափի	1 080 000
2.	Դրոշներ՝ նախատեսված ՄՀՀ ներքևի հատվածի աստիճանների սկզբնամասի համար	10 հատ		450 000

Վաճառող
Ա/Ձ Արտակ Հարությունյան Շահնազարի

Փաստացի գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
Զաքիյան 4, 74,75 տարածք
ՀՎՀՀ՝ 20160365
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2052032276781001

Արտակ Հարությունյան

Գնորդ
«Հայաստանի հանրային
հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26

ՀՎՀՀ՝ 01540062
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001

Հովհաննես Մովսիսյան
Գործադիր տնօրեն